վարքով միշտ ճգնում էր: Բայց նա, որ սկզբնաչարն է և ճշմարտության թշնամի, նախանձեց նրա վարքին և կամեցավ ոչ միայն նրա հոգին կորցնել, այլև նրա մարմինը խաբել: Այս պատճառով հրեշտակի կերպարանք առավ և երևաց նրան. համարձակվեց ասել, թե ես տիրոջ հրեշտակն եմ, առաքվել եմ Աստծու կողմից, որպեսզի քեզ հետ խոսեմ, մխիթարեմ և դյուրություն անեմ ավելի ճգնության համար, միշտ քեզ հետ լինեմ, իմացնեմ երկրի վրա տեղի ունեցած բոլոր բաները աշխարհի սկզբից մինչև այժմ: Իսկ Հովհաննեսը թեպետ գիտակ էր աստվածային պատվիրաններին, սակայն սատանական հնարքներին անփորձ էր: Այդ պատճառով հավատաց նրան, բայց Աստծուց չհեռացավ: Այդպես նա մնաց յոթ տարի: Դևը գալիս խոսում էր նրա հետ և իմացրեց նրան ամբողջ անցյալները: Իսկ ինքը՝ Հովհաննեսը, ինչ որ իմանում էր, Աստվածաշնչից էր իմանում, իսկ ինչ չգիտեր, դևն էր սովորեցնում նրան: Այս էր պատճառը, որ ոչ ոք ավելի իմաստուն չէր նրանից: Անապատի միաբանները այս բանը չիմացան. բայց երկու մարդու ինքը իմացրեց՝ մեկը Մելիքսեթ անունով աբեղա էր Վժան գյուղից, և մի մահտեսի Մկրտիչ անունով՝ Վան քաղաքից: Սրանց Հովհաննեսը հայտնեց: Դևը խոսում էր Հովհաննեսի հետ, իսկ Հովհաննեսը պատմում էր Մելիքսեթին, իսկ Մելիքսեթը գրում էր թղթի վրա: Դևը այս էլ էր ասել, թե Լուսավորչի ցեղից ես՝ այսինքն Արշակունի, իսկ քո տոհմից մեկը պետք է կաթողիկոս լինի և մեկը թագավոր, և ապա գալու է աշխարհի վերջը: Իսկ ես քեզ ծովի վրա կտանեմ բոլորի աչքի առջև իբրև ցամաքի վրա:

Երկար ժամանակ հետո իմացան նաև անապատի միաբանները. շատ նախատինքներով և ծեծով հարցնում էին՝ ինչո՞ւ դևի հայտնվելը հրեշտակի ես համարում: Եվ նա պնդում էր ու հաստատում դևի խոսքերը և դևին քարոզում էր իբրև Աստծու հրեշտակի: Ասաց, թե համբարձման օրը բազմաթիվ հրեշտակներ են գալու, որպեսզի ինձ տանեն ծովի վրա, որպեսզի դուք տեսնեք իմ գնալը և հավատաք, որ Աստծու հրեշտակն է խոսում ինձ հետ: Երբ միաբանները այս լսեցին, թափվեցին նրա վրա և բռնելով մտցրին մի խուց, շղթայեցին նրա ոտքերը և դուռը կողպեցին վրան, ոչ ոքի թույլ չտվին մտնել նրա մոտ: Մի մենակյացի նշանակեցին՝ ամեն օր նրան կերակուր տանել, դնել նրա առջև և վերադառնալ:

Այսպես նա բանտում մնաց երկար ժամանակ, ամեն օր դևը գալիս էր, խոսում նրա հետ և հայտնում էր նրան անծանոթ բաներ: Հովհաննեսի՝ դևի հետ խոսակցելու յոթը տարին լրանալիս հինգ պասի[103] օրերին, վեցերորդ շաբաթին, չորեքշաբթի դևը եկավ նրա մոտ և ասաց. «Պատրաստվիր, քանի որ համբարձման ժամին կգանք, կխորտակենք դռները, շղթաները կպոկենք ոտքերիցդ և այստեղից քեզ հանելով կտանենք ծովի վրա, որպեսզի գան տեսնեն քո փառքը: Եվ մինչդեռ Հովհաննեսը մտախոհության մեջ էր, թե ի՞նչ անի, ահա եկավ նրա սպասավորը, նրան երկու տեսակ կերակուր բերեց: Աստծու ողորմությամբ հորդորում եղավ նրան. նա առավ երկու տեսակ կերակուրը խառնեց իրար և դևին ասաց՝ եթե Աստծու ճշմարիտ հրեշտակն ես դու, երկու կերակուրները բաժանիր իրարից, որպեսզի կատարելապես հավատամ քեզ: Ապա այն չար սատանան վեր կացավ կանգնեց և ձեռքը ձեռքին զարկելով ծափում էր ծիծաղելով և ասում՝ ուրախ եղիր, խնդա, ես այն դևն եմ, որ Ադամին[104] խաբեցի և դրախտից հանեցի, մի՞թե դու նրանից լավ ես, որ չխաբվես ինձնից: Այս ասաց և անհայտացավ:

Իսկ Հովհաննեսը խելքի եկավ և ասաց. «Վայ իմ կյանքին, թե ինչպես աշխարհում խաղք ու խայտառակ եղա: Արդ՝ ի՞նչ աչքով նայեմ մարդկանց երեսին, կամ ինչպե՞ս խոսեմ մարդու հետ: Վայ մոլորյալ գերվածիս»: Եվ իր երեսը դարձրեց դեպի արևելք և ասաց լալով. «Որովհետև մեծ են քո գործերը, Տեր, դու փրկեցիր ինձ մահվանից, դու հրաշքներ արիր երկրի վրա»: Այս ասելով ողբում էր ու արտասվում: Ապա ուշքի գալով կանչում է միաբաններին: Միաբանները ձայնը լսելով, գնացին դուռը բացին և տեսան նրա դեմքը այլագունված է: Նա ընկած էր քիթ ու բերանի վրա ոտնատակ և գոռում էր բարձրաձայն աղաղակով՝ մեղանչեցի երկնքի և ձեր առջև: Եվ պատմեց չարի խաբեությունը, լալուց չէր դադարում:

Ապա ոտքերից հանին շղթաները, տաք ջուր բերին լցրին ոտքերին, ձեռքերին ու գլխին, մազերը հարդարեցին: Եվ քանի որ ժամը մոտ էր երեկոյին, միաբանները զգեստավորվեցին, բերին շուրջառ գցին նրա վրա և վառված լապտերներով առաջ ընկած գնում էին ասելով. «Թող նրանք լինեն ինչպես փոշի հողմի առջև: Թող նրանց ճանապարհները խավար լինեն: Եվ այսպես տարան մինչև եկեղեցու դուռը: Եվ ասացին. «Տեր, մեզ համար բաց ողորմության դուռը,